

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԵԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ԼԻ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԶԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԾՈՒԿՍ ԲՈՒՍԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՅԻՆ-ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ¹

ԺԲ. դարը նշանաւորուում է Ներսէս Շնորհալի հայրապետի եկեղեցական եւ գրական-մշակութային բուռն գործունէութեամբ:

Կիրակոս Գանձակեցու բնորոշմամբ՝ Ներսէս Շնորհալին յարութին առած Գրիգորիս աստուածաբանն է, որը սուրբ հոգու զօրութեամբ ամեն բանի մէջ հմուտ է, նաեւ իմաստութեամբ աւելի լցուած, քան յոյներն² ու ասորիները³: Նա բազմազան խօսքերով ու իմաստասիրական ոճով, համառօտ ու պարզ լեզուով գրում էր խոսարովեան շարականներ⁴, մեղեդիներ, տաղեր ու ոտանաւորներ, որոնք՝ որպէս բերդապահներ, հակադիր էին դատարկահոնչ ձայներին⁵: «Բնութիւնն էլ տուած էր նրան վեհ եւ շնորհալից կերպարանք, այնպէս որ նրա հոգու վայելչութեանն ու վսեմութեանը համաձայն էր նրա արտաքին տեսքը եւս»⁶: Եւ ի տրիտուր աստուածային այս շնորհներին՝ Հայոց Հայրապետը բարի վայելչութեամբ ու երանելի մահով է փոխադրուում ի Քրիստոս:

Ներսէս Շնորհալու տարաբնոյթ հանելուկաշարերը յայտնի են հետեւեալ խորագրերով՝ «Նորին Տեառն Ներսէսի ասացեալ զսահման իրին, որ կոչի լուծմունք, վասն խոհեմ բանասիրաց, զի մտախոհ լինե-

^{1*} Ստացուել է՝ 19.09.2023, գրախօսուել է՝ 22.09.2023:

էլ. հասցէ՝ mesropyanhay@yahoo.com:

² Տէս Գ. ՄՈՒՐԱԳԵԱՆ, Ներսէս Շնորհալու խմբագրած «Յովհաննու Ոսկեբերանի ներբողեան ի վարս եւ ի նահատակութիւն սրբոյն Գրիգորի հայոց Մեծաց Լուսաւորչի» երկը: Տէս Մատենագիրք հայոց, հտ. ԻԲ., ԺԲ. դար, ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Գիրք Բ., Երեւան, 2022, էջ 761–767: Նոյնի՝ Սրբոյ վկայիցն Քրիստոսի՝ Տարագոսի, Պրոբոսի եւ Անտրոնիկոսի վկայաբանութեան Ներսէս Շնորհալու խմբագրութիւնը: Տէս նշ. աշխ., էջ 851–853:

³ Տէս Է. ՊԵՏՐՈՍԵԱՆ, Սուրբ Բարսաւումայ Միայնակեացի վարքագրութեան թարգմանութեան՝ Ներսէս Շնորհալու խմբագրութիւնը: Տէս նշ. աշխ., էջ 689–698:

⁴ Տէս Ղ. ԱԼԻՇԱՆ, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 85–93:

⁵ Տէս Կ. ԳԱՆՁԱԿԵՑԻ, Հայոց պատմութիւն, թարգմ., առաջ. եւ ծանօթ.՝ Վ. Առաքելեանի, Երեւան, 1982, էջ 92–94:

⁶ Հ. ՂԵՒՈՆԻ ՅՈՎՆԱՆՅԱՆ, Մեծն Ներսէս, Վիեննա, 1851, էջ 3:

լով ասացեն զանունս իրին», «Տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի ասացեալ է Հանելուկս վասն ուրախութեան մարդկան: Եւ զնէ սկիզբն զԱդամ», «Տեառն Ներսէսի ասացեալ է զԱռակքս վասն ուրախութեան մարդկան»⁷, «Տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի ասացեալ զՀանելուկս ի Սուրբ Գրոց», «Հանելիկեր գրաբառք եւ պատուականք՝ Ներսէսի Հայոց կաթողիկոսի ասացեալ», «Հանելուկ է նախահարց եւ մարգարէից՝ ի Ներսիսէ», «Ոտանաւոր Հանելուկ Տեառն Ներսէսի կաթողիկոսի», «Արարեալ Հանելուկ Ներսիսի», «Հնելուկ ի Ներսիսէ», «Հանելուկ նախնեաց»: Ներսէս Շնորհալուսն է վերագրուում եւս մէկ հանելուկաշար՝ «Անխորագիր» վերտառութեամբ:

ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱՆԻՆ ՈՐՊԷՍ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ

ՀԱՆՔԼՈՒԿԻ ԺԱՆՐԻ ՀԻՄՆԱԳԻՐ

Ներսէս Շնորհալու հանելուկները տարբեր դիտանկիւններով ուսումնասիրողները՝ Ա. Մնացականեան⁸, Փ. Այնթափեան⁹, Հ. Բախչինեան¹⁰, Հ. Որսկանեան¹¹, Գ. Յակոբեան¹², Ա. Ղազինեան¹³, Մ. Աւգալբէգեան¹⁴, Վ. Ներսիսեան¹⁵, Պ. Շարաբխանեան¹⁶ եւ այլք, հայոց հայրապետին համարում են հայ գրականութեան աշխարհականացման սկզբնաւորող,

⁷ Տէս ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ ԾՆՈՐՀԱՆԻՆՑ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ, Բանք չափաւ, ի Վենետիկ, 1928, ԹՅԶԶ., էջ 609–639:

⁸ Տէս Ա. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, Հայ միջնադարեան հանելուկներ (Ե.–ԺԳ. դդ.), Երեւան, 1980: Նոյնի՝ Հայ միջնադարեան հանելուկների դասական շրջանը: Տէս Մատենագիրք հայոց, հտ. ԻԱ., Ներսէս Շնորհալի, Գիրք Ա., Երեւան, 2018, էջ 1219–1252:

⁹ Տէս Փ. ԱՅՆԹԱՓԵԱՆ, Ներսէս Շնորհալու անտիպ հանելուկները, «էջմիածին» ամսագիր, 1951, Թ.–Ժ., էջ 61–64:

¹⁰ Տէս Հ. ԲԱԽՉԻՆԵԱՆ, նշ. աշխ.:

¹¹ Տէս Հ. ՈՐՍԿԱՆԵԱՆ, Հայոց պատմութեան թեմաներով միջնադարեան հանելուկները, ՊԲՀ, 2022, № 2 (220), էջ 140–162: Հ. ՈՐՍԿԱՆԵԱՆ, Ներքող-հանելուկ՝ Սրբոց թարգմանչացն ու հայոց գրերի արարմանը, «էջմիածին», ԺԲ., 2022, էջ 54–71:

¹² Տէս Գ. ՅԱԿՈԲԵԱՆ, Ներսէս Շնորհալու անտիպ հանելուկները, ՊԲՀ, 1962, 4, էջ 105–114: Գ. ՅԱԿՈԲԵԱՆ, Ներսէս Շնորհալի, Երեւան, 1964:

¹³ Տէս Ա. ՂԱԶԻՆԵԱՆ, Դիմառնութեան հնարանքը միջնադարեան հայ բանաստեղծութեան մէջ, տէս «Ներսէս Շնորհալի», Յօդուածների ժողովածու, էջ 176–188:

¹⁴ Տէս Մ. ԱՒԳԱԼԲԵԳԵԱՆ, Ներսէս Շնորհալի մանկավարժն ու մանկագիրը, տէս «Ներսէս Շնորհալի», Յօդուածների ժողովածու, էջ 52–66:

¹⁵ Տէս Վ. ՆԵՐՍԻՍԵԱՆ, Ներսէս Շնորհալու պոետիկայի մի քանի հարցեր, տէս «Ներսէս Շնորհալի», Յօդուածների ժողովածու, էջ 157–167:

¹⁶ Տէս Պ. ՇԱՐԱԲԽԱՆԵԱՆ, Շնորհալու դերը հանգի եւ հանգիտութեան զարգացման գործում, տէս «Ներսէս Շնորհալի», Յօդուածների ժողովածու, էջ 168–175:

հանելուկի տեսակի հիմնադիր¹⁷, 300¹⁸ գրաւոր հանելուկի հեղինակ, բանաստեղծական կայուն ձեւի մշակող, բարաոնութեան ու դիմաոնութեան հմուտ գործադրող, յանգագիտակ, գեղարուեստական խօսքի վարպետ, մանկավարժ, մանկագիր եւ այլն:

«Առեղծուածք ասացեալ եւ զԱռակքս վասն ուրախութեան մարդկան» ընդհանուր խորագրով չափածոյ ստեղծագործութիւնները հիմնականում ուսումնասիրութեան նիւթ են հանդիսացել գրականագիտական եւ բանագիտական¹⁹ տեսանկիւններից, եւ լեզուական քննութեան, մասնաւորաբար բառապաշարի իմաստային խմբերի դիտարկման շէն ենթարկուել: Քանի որ հանելուկների գեղարուեստական առանձնաչատկութիւններից են ոչ միայն սուր դիտողականութիւնը, պատկերաւոր եւ արտայայտիչ մտածողութիւնը, այլեւ նկարագրութեան այլաբանական ձեւը, երեւոյթի յատկանիշների գաղտնագրուած ձեւով բացայայտումը²⁰, ուստի գեղարուեստական պատկերն ամբողջական դարձնելու համար անհրաժեշտ են համապատասխան խորհրդանիշներ՝ բնութեան երեւոյթներ, կրօնաեկեղեցական սպասք եւ պարագայք, կենդանական աշխարհ, ինչպէս նաեւ բուսական աշխարհ յատկանշող հասկացութիւններ: Հանելուկ-խորհրդանիշ յարաբերակցութեան մասին Ս. Յարութիւնեանը գրում է. «Հանելուկի ամենաընդհանուր առանձնաչատկութիւնն այն է, որ նա իր կառուցուածքով բաղկացած է երկու միմեանց պայմանաւորող մասերից՝ հանելուկի առարկայից կամ բուն նշանակութիւնից եւ հանելուկային բանաձեւից կամ արտաքին պատկերից: Հանելուկային բանաձեւն ու առարկան արտաքին որոշակիութեան իմաստով տարբերում են միմեանցից: Այս տեսակէտից հանելուկը շատ է մօտենում խորհրդանիշին, որի բնորոշ յատկանիշը նրա արտաքին անմիջական պատկերի եւ ներքին ընդհանուր նշանակութեան իրար նկատմամբ

¹⁷ Տէս Ա. ՄԱՅԱԿԱՆԵԱՆ, նշ. աշխ.:

¹⁸ Տէս Ա. ՄԱՅԱԿԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 69:

¹⁹ Բանագիտութեան մէջ հանելուկների գիտական դասակարգման երկու համակարգ կայ՝ ա) «առարկայական, երբ հիմք է ընդունւում լուծման առարկան, եւ նրա տակ են համախմբւում վերջինիս վերաբերեալ եղած բոլոր հանելուկներն իրենց տարբերակներով», բ) դասակարգում ըստ հանելուկային բանաձեւերի, երբ «տուեալ հանելուկային կերպի շուրջ են միախմբւում տարբեր առարկաների մասին ասուող հանելուկների նոյն կամ նման փոփոխակները» (տէս Ս. ՅԱՐԱԽԻՅԻՆԵԱՆ, Հայ ժողովրդական հանելուկներ, Երեւան, 1965, էջ ԺԹ.):

²⁰ Տէս Է.Գ. ԶՐԲԱՇԵԱՆ, Հ. ՄԱԽՁԱՆԵԱՆ, Գրականագիտական բառարան, Երեւան, 1972, էջ 166:

ունեցած տարբերությունն մէջ է»²¹: Այս առումով ուշագրաւ են դառնում հանելուկներում գործածուած բուսանունները՝ որպէս «Բնութիւն» հասկացութեան բաղադրիչների բնորոշիչներ:

ԲՈՒՍԱՆՈՒՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

«Բնութիւն» հասկացութիւնը, որպէս հանելուկի այլաբանական հէնք, Ս. Յարութիւնեանը դասակարգում է առարկայական չորս եղանակով՝ 1. երկնային մարմիններ եւ երեւոյթներ (երկինք, երկնային լուսատուներ, մթնոլորտային երեւոյթներ), 2. ժամանակ, 3. Երկիր (երկրային առարկաներ եւ երեւոյթներ), 4 բուսական աշխարհ (այգի, ծառեր, մրգեր, պտուղներ, բանջարեղէն, հացաբոյսեր, ծաղիկներ եւ այլ բուսատեսակներ)²²:

Զորորդ՝ բուսական աշխարհ իմաստային խումբը ներկայացնող բառաշերտը հանելուկներում, ստոյգ բուսատեսակ նշելուց բացի, գործածւում է փոխաբերացուած, իմաստային տարբերակուածութեամբ, անձնաւորուած կամ համեմատական յարաբերութեան մէջ, բարառնաբար կամ դիմառնաբար, դրական կամ բացասական երանգաւորումով: Ըստ Ա. Ղազինեանի՝ Ներսէս Շնորհալին խօսքը, պատկերը համոզիչ դարձնելու համար բարառնաբար կամ դիմառնաբար է նկարագրում բոյսերն ու տունկերը եւ բնութեան երեւոյթները²³:

Կրօնական բովանդակութիւն ունեցող հանելուկներում Ներսէս Շնորհալին բուսանուններ քիչ է գործածում: Տարբեր պտղանուններ, ծաղկանուններ, ծառանուններ եւ այլ բուսանուններ, ինչպէս նաեւ այս բառափնջին յարիմաստ լեզուական միաւորներ են հանդիպում յատկապէս աշխարհիկ բնոյթ ունեցող հանելուկներում:

«Նորին տեառն Ներսէսի ասացեալ զսահման իրին, որ կոչի լուծմունք, վասն խոհեմ բանասիրաց, զի մտախոհ լինելով ասացեն զանունս իրին» խնդիրը բաղկացած է երկու մասից՝ վերնագրից, այսինքն՝ բացատրուող իրից, եւ մեկնաբանութեան շարադրանքից՝ խոհեմութիւն ու մտախոհութիւն պահանջող հատուածից: Ըստ այսմ՝ բուսանուն բաղադրիչ ունեցող հանելուկները բաժանել ենք երեք խմբի՝ 1) ըստ լուծմունքի, այսինքն՝ բացատրութեան ենթակայ բուսանուն, 2) ըստ հանելուկի

²¹ Ս. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ, Հայ ժողովրդական հանելուկներ, Երեւան, 1960, էջ 14–15:

²² Ս. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ, Հայ ժողովրդական հանելուկներ, Երեւան, 1965, էջ Ի:

²³ ՏԷՍ Ա. ՂԱԶԻՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 178:

շարադրամբում գործածուած բուսանուան եւ Յ) ըստ նշուած երկու յատկանիշը համատեղող բուսաբառերի, երբ բուսատեսակ յատկանշող լուծմունքը մեկնաբանում, ներկայացում է այլ բուսանուններով:

Քանի որ «Հանելուկի ժանրը ենթադրում է աւարտուն ու պարզ բանաձեւեր, կուռ ու ամփոփ շարադրանք, փոքր ծաւալ՝ մէկ կամ մի քանի տողի սահմաններում»²⁴, ուստի բուսանունները եւս ուղիղ կամ փոխաբերական իմաստներով ունեն ստոյգ գործածութիւն՝ հիմնականում առանց որոշչայատկացուցչային, քերականական այլ կառուցների համադրման եւ լեզուաոճական ընդգծուած տարբերակուածութեան: Հանելուկի պատասխանը գտնելուն օգնում է այլաբանութիւնն ու համեմատութիւնը ճիշտ նկատելը: «Հանելուկ յօրինողը հանելուկի բուն նշանակութիւնը այլաբանօրէն արտայայտելու համար շրջապատի առարկաների, երեւոյթների կամ նրանց որոշ գծերի ու յատկանիշների զուգորդմամբ ստեղծում է հանելուկային դիմակ կամ պատկեր: Այն մի կողմից ունկնդրից քողարկում է հանելուկի նշանակութիւնը, իսկ միւս կողմից անուղղակիօրէն արտայայտում է հէնց այդ նշանակութիւնը: Այս երկուութիւնն է ահա հանելուկը դարձնում այլաբանութիւն եւ միաժամանակ՝ համեմատութիւն»²⁵:

ԲՈՒՍԱՆՈՒՆԸ ՈՐՊԷՍ ԱՌԱՋԱԴՐՈՒԱԾ ԼՈՒԾՄՈՒՆՔ

Այս խմբի մէջ են մտնում այն հանելուկները, որոնք որպէս լուծմունք՝ առաջադրում են բացատրութեան ենթակայ բուսատեսակ, որի անունն ընտրուած է իբրեւ հանելուկի վերնագիր: Այսպիսի հանելուկներում բուսանուններ գործածուած չեն:

Անդրադառնալով լուծմունքին՝ Վիկտոր Համբարձումեանը կարծիք է յայտնում, որ հանելուկի այդ բաղադրիչը պահանջում է առանձնակի խոհականութիւն եւ գիտելիքի որոշակի պաշար, ապա մէջբերում է Ներսէս Շնորհալուն՝ արեւին, տարուայ օրերին ու կիսամեակներին վերաբերող հանելուկը («Նա բարձրանայ Այբէն ի Քէն Եւ խոնարհի դարձեալ անդրէն. Ամէն գրրի՝ հինգ օր՝ յիւրմէն, Գընայ ըզվեց ամիսն ամեն»): Աստղագէտը նկատում է. «Ահա թէ որքան հնարամիտ է ստեղծուած այս փոքրիկ հանելուկը, որի միջնադարեան լուծողները պիտի յստակ պատկերացում

²⁴ Ա. ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 11:

²⁵ Ս. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ, Հայ ժողովրդական հանելուկներ, Երեւան, 1960, էջ 121:

ունենային հայոց այբուբենի, տարուայ օրերի եւ թուաբանական համապատասխան գործողությունների մասին»²⁶:

Ա. Մնացականեանը եւս հանելուկի առաջադրած խնդիրը պարզելու հարցում կարեւորում է նախնական գիտելիքը: Նա գրում է. «Հանելուկի ժանրին, մանաւանդ գրաւոր հանելուկներին յատկանշական է խոհակա-նութիւնը: Իւրաքանչիւր հանելուկ անպայման ճանաչողական իմացութեան արդիւնք է, գիտելիքների արտայայտութիւն՝ ստեղծուած մտածու-մի, տրամաբանման զօրութեամբ:Դատողականութեան ուժի շնորհիւ գրաւոր հանելուկները յաճախ ստանում են իմաստասիրական խորք ու խորհուրդ»²⁷:

Որպէս լուծմունք առաջադրուած բուսանուն վերնագիր-բաղադրի-չով են պտուղ, խոտաբոյս, ծառատեսակ կամ յարակից բառապաշար նշող ստորեւ ներկայացուած բառերը: Օրինակ՝

ա) Ընդհանրապէս ծառ հասկացութիւն, ծառին առնչակից իրոյթ, ծառա-նուն կամ թփանուն են յատկանշում՝

№ 192²⁸. «Այգի»: «Կին մի նստէր յոյժ փառաւոր, Դստերք ունէր շատ եւ ահաւոր, Կանաչ հագնէր զերդ թագաւոր եւ ամենեցուն էր ցանկա-ւոր»: Այգի հասկացութեան ալլաբանական պատկերի դաստիարակչա-կան արժէքի մասին Գ. Յակոբեանը գրում է. «Երկրագործական աշխա-տանքների հետ մարդկանց աւելի սերտ կապելու, դէպի աշխատանքը սէր առաջացնելու նպատակով յօրինուած են մի քանի գեղեցիկ հանե-լուկներ: Երկրի վրայ ամենից շատ բարիք տալիս է այգին. նա նման է բազմազաւակի, փառաւոր մի ծնողի, որն իր շուրջն է հաւաքում զաւակ-ներին»²⁹, իսկ Հ. Որսկանեանը յաւելում է, որ ըստ ժողովրդական մտածո-ղութեան՝ «ամենակախարդական այգին դրախտն է»³⁰:

№ 5. «Ծառն»: «Կանաչ մի կայ ի մէջ դրախտին, Չորս գետք անց-նին հետ իր տակին, Պտուղ ունի զբաղցր ու զլեղին եւ է՛ ճշմարիտ երկու բնութիւն»: Գ. Յակոբեանն ընդգծում է, որ Ներսէս Շնորհալին

²⁶ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ, Հայ մշակոյթի անմար աստղը, տէն «Ներսէս Շնորհալի», Յօդ-ուածների ժողովածու, Երեւան, 1977, էջ 8:

²⁷ Ա. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 12:

²⁸ Հանելուկի այս եւ յաջորդ համարները՝ ըստ Ա. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, Հայ միջնադարեան հանելուկներ (Ե.-ԺԳ. դդ.), Երեւան, 1980:

²⁹ Գ. ՅԱԿՈԲԵԱՆ, նշ. աշխ., էջ 110:

³⁰ Հ. ՈՐՍԿԱՆԵԱՆ, Գրին ու գրչութեան արուեստին նուիրուած հայ միջնադարեան հանելուկները, «Բազմավէպ», ՃԶ. տարի, 2022, թիւ 1–2, էջ 240:

թթի ծառ խորհրդանշելին վերագրում է ապրանքային արժեք եւ «սովորեցնում է այդ ծառի օգտակարութիւնը նաեւ շերամաբուծութեան տեսակէտից, որը խոշոր նշանակութիւն է ունեցել ժամանակի արհեստների եւ տնտեսութեան համար»³¹: Յաւելենք, որ թթենուն նուիրուած հանելուկը, որը Գ. Յակոբեանը վկայաբերում է ըստ Մատենադարանի №2961 ձեռագրի 1962 թ. գրած յօդուածում, Ներսէս Շնորհալու «Բանք չափաւ»-ում³², Ա. Մնացականեանի՝ 1982 թ. կազմած «Հայ միջնադարեան հանելուկներ» ժողովածուում եւ «Մատենագիրք հայոց»-ի ԻԱ. հատորում, չգտանք («Զայն ծառն տես, որ կու ծաղկի, Տերեւն է իւրն զերդ ըզկաշի, Նարմով»³³ զգեստ մարդկան լինի, Խիստ վայելուչ եւ ցանկալի»):

№211. «Մրտենի»: Դ. Ալիշանը մուրա // մրտենի // մրաի բառայօդուածը բացատրում է «անթառամ եւ հոտաւոր ծառ մի, հոշակեալ ի հնուց, ճիւղերն իբրեւ պսակ յիշատակաց եւ արժանաւորաց ընծայուելով, Myrtus»³⁴. Ստ. Մալխասեանցը մեկնաբանում է որպէս մրտազգիների ընտանիքին պատկանող, 200 տեսակ ունեցող մշտադալար թուփ³⁵: «Կանաչ, դալար որպէս հով ջուր, Զարդ մըջլսի աղւոր աւուր, Հոտովն անուշ ու կամ քաֆուր»:

№213. «Սոճի»: «Կայր փերեզիկ մի՝ ի գլուխ ի վեր, Ունէր ծախու տաշտ ու նետեր, Շատ խունկ, շատ մոմեղէններ, Ու անհամար շատ ասըղներ»: Այս հատուածում ուշագրաւ է փերեզակ-մանրավաճառի խիստ աշխարհիկ պատկերը: Յուշող «անհամար շատ ասըղներ» բառակապակցութիւնը համեմատութիւն է ստեղծում սոճու փշերի եւ ասեղների միջեւ՝ օգնելով հանելուկի գաղտնագիրը բանալուն:

№215. «Կաղնի»: «Գնա հասիր դու այն կաղին, Որ գնաց նստաւ խէչ թագւորին, Թէպէտ առին զինք ծեծեցին, Բայց իշխանայք ցանկանային»: Տուեալ պատկերում Ներսէս Շնորհալին խօսքը կառուցել է կաղնի գոյականի եւ կաղին գոյականաբար հանդէս եկող կաղ ածականի յարանունների բառախաղով, որ է՝ բառի եւ քերականական ձեւի համադրութիւն:

բ) Պաղանուն կամ մեզանուն վերնագրով են՝

³¹ Գ. ՅԱԿՈԲԵԱՆ, նշ. աշխ., էջ 110:

³² ՏԵՆ ՏՆ. ՆԵՐՍԵՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ Հայոց կաթողիկոսի Բանք չափաւ, Վենետիկ, 1928, ԹՅՀԶ., էջ 609–639:

³³ Նարմով – փափուկ:

³⁴ Դ. ԱԼԻՇԱՆ, Հայբուսակ կամ հայկական բուսաբանութիւն, Վենետիկ, 1895, էջ 447:

³⁵ ՏԵՆ ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, Հայերէն բացատրական բառարան, Երեւան, 1944, էջ 377:

№51. «Նոտոն»: «է նա կանաչ կոճակ բոլոր, Անպակ (ամպակ, անապակ) գինով լցած տկճոր, Կարմիր մեղուք ի ներս աղուոր, եղբայր, դու կեր գինչ մեղր ի ծոր»:

№193. «Խաղող»: «Զարմանք ասեմ քեզ, սիրելի՛, Կին մի ծնաւ գոռւզ որդի, Տղայն ունի ալիք ծերի, երբ ծերանայ՝ դառնայ սեւի»: Այսպիսի հանելուկները ներկայանում են որպէս տուեալ պտղի ալլաբանական նկարագրութիւն:

№197. «Տանձ»: «Բրուտ մի կայր խիստ պիտանի, Զկուծն զուգեաց թուղթ ու նուկի, Խառնեաց ի նա դեղ հիւանդի, Խճեր ու մեղր ի մէկտեղի»:
գ) Բանջարեղէն կամ խոտաբոյս են նշում՝

№52. «Սեխ»: «Ի հոտ ամ ի՛նչ ես գուզուզել, Թէ՛ քո դայեկն է զքեզ մոռցել, Այտդ զմեռածին գուն է առեր, երնէ՛կ, որ զքո միսդ է կերել»:
Գաղտնագրի բացայայտմանը օգնում են սեխի դալուկ եւ փափկամիս լինելու յատկանիշների առանձնացումը:

№53. «Սոխ»: «է բոլորակ եւ խոռահատ, Բնաւ չունի սեւոյ տեսակ, Իշխանք եւ աղքատք ունին անհատ, Թէ հարկանես զնա առատ, Դու արտասուես, եւ ինքն՝ ի զատ»:
Այս հանելուկում գործածուած է սոխի՝ սեւ չլինելու ժխտման միջոցը:

№118, 119, 44. «Յորեան» // «Յորեն»: «Տեսայ զիմ հոգոյս հոգին, Որ մեռաւ եւ ի հող թաղեցաւ, Դարձեալ, իմ սիրոյս համար նա յարեաւ եւ շատ դատեցաւ»: Փ. Այնթափեանն ալլաբանական այս խորիմաստ պատկերի մասին գրում է. «...կոկիկ հիւսուած մի գողտրիկ բանաստեղծութիւն է, ուր պատկերաւոր արտայայտուած է բանաստեղծի սէրը դէպի բնութիւնը եւ ստեղծագործ աշխատանքը. նա հողագործի՝ հողի մէջ գցած սերմը համարում է իր «հոգւոյն հոգին», որը թաղւում է հողի մէջ, ապա յարութիւն առնում, մի շարք տանջանքների ենթարկւում, սրի առաջ կանգնում, քարկոծւում (քաղուելը եւ ծեծուելը), մտնում է գետինը (չրաղացը), անցնում կրակով (թոնիրը), եւ այդ բոլորը՝ յանուն «իր սիրոյն»»³⁶: Գ. Յակոբեանը համոզում է յայտնում, որ «Յորենին վերաբերող հանելուկները ցոյց են տալիս, թէ որքան ջերմ է եղել Ներսէս Շնորհալու սէրը դէպի հողն ու հողի աշխատաւորը: Յորենն է կեանքի աղբիւրը, որին բանաստեղծն անուանում է հոգու հոգի»³⁷:

³⁶ Փ. ԱՅՆԹԱՓԵԱՆ, նշ. աշխ., էջ 62:

³⁷ Գ. ՅԱԿՈԲԵԱՆ, նշ. աշխ., էջ 110–111:

№ 121. «Գարի»: «Եկ հոմանուն գարունարար Յրտին բնութիւն եւ զովարար, Շնչաւորաց կենդանարար, Եւ անսրբոցն սրբարար»:

№ 206. «Դդում»: «Իրք մի կայ՝ ինքն է ջրբեր, Հանց գինեխում՝ մարդ չէ տեսեր, Խմէ, ձգէ, դառնայ ի վեր, Դատարկ նա չէ մարդու ընկեր»:

№ 54. «Սունկ»: «Հիմն չկայ, տունն երեւի, Ինքն է վրան միասիւնի, Տանիսն կոկ՝ գինչ ապիկի, Եւ առաստաղըն քաղրթի»: Ստորին բոյսերի դասին պատկանող անտերեւ այս տեսակը նկարագրուած է յուշող բառերի (միասիւն, տանիս, առաստաղ) եւ նմանութեան այլաբանական պատկերների միջոցով (առանց հիմքի, ապակու նման կոկ տանիք):

ՀԱՆՆԵԼՈՒԿԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՏՈՂԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ԲՈՒՍԱՆՈՒՆ

Այս խմբի հանելուկներում բուսանունները կամ բուսանուանն առնչակից բառերն օգնում են պարզելու լուծմունքը եւ գուշակելու առաջադրուած խնդիրը:

ա) Ընդհանրապէս ծառ հասկացութիւն, ծառին առնչակից բառ, ծառանուն կամ թփանուն են՝

№ 3. Այգի, բուրաստան, մրգալի: «Վեր արեւելք կայր քաղաք մի՝ խիստ բարեւէտ եւ մրգալի, Բուրաստան մեծ եւ աղուոր այգի, Գերիս յիւր մէջն պիտէի» («Դրախտ»): Այս հանելուկի առթիւ Ա. Մնացականեանը գրում է. «Եթէ ժողովրդական եւ գրաւոր հանելուկներում սովորաբար նկատուում է հանելուկի առարկայի այլաբանական նկարագրութիւնից չխոտորուելու որոշակի ձգտում, ապա Ներսէս Շնորհալին աւելի ազատ ու բանաստեղծօրէն է վարում հանելուկի հետ, օգտագործում է գեղեցիկ արտայայտութիւններ, դրսեւորում անգամ անձնական-հեղինակային ցանկութիւններ»³⁸: Ապա որպէս հեղինակային ցանկութիւն՝ գրականագէտը բերում է հանելուկի վերջին տողը՝ համարելով այն հանելուկի բուն պահանջին չհամապատասխանող: Սակայն պէտք է ասել, որ խնդրոյ առարկայ տողը Ներսէս Շնորհալին ինքնանպատակ չի ընտրել, բանաստեղծական տողը յանգաւորելու ձեւային կողմով չի առաջնորդուել եւ ամենայն դրախտայինն արժեւորելով՝ այնտեղ թէկուզ գերի լինելու ցանկութիւն է յայտնել:

№ 20 (ԺԲ. շարքից). Բուրաստան, անկի: «Բոց գերամբարձ յոյժ ցոլա-

³⁸ Ա. Մ. Ա. ՅԱԿԱՆԵԱՆ, Մատենագիրք Հայոց, ԻԱ., էջ 1222:

ցեալ, նման ցօղոյ յերկիր իջեալ, Մեծ բուրաստան նա ոռոգեալ, Տնկոցն հուր ջամբեցուցեալ» («Եզեկիէլ»):

Ինչպէս նկատու՞մ ենք, այս հանելուկներն ունեն կրօնական բովանդակութիւն, եւ խնդրոյ առարկան դրախտն է եւ Եզեկիէլ մարգարէն: Ինչպէս յայտնի է, Բաբելոն գերեզմարուած քսանհինգամեայ Եզեկիէլը Աստուծոյ ընտրեալներից էր եւ Աստուծոյ շնորհով զղջում էր քարոզում իսրայէլացիներին եւ բազում պատուհասներ էր կանխապատնում (Եզեկ. Ա. 4 – Բ. 4): Այս իրողութիւնը գաղտնագրուած է ցօղի նման երկիր իջնելու, այգիներն ու տնկիւնները ջրելու բանաստեղծական այլաբանական պատկերներով:

№4. Ծառն, այգի: «Զաւակ ծնաւ յայն մեծ այգին, Ծառն ետուր ծիծ եւ եսպան զորդին, Նոքա սպիտակ զգեստ ունէին, Հանին եւ ազան զայծու մորթին» («Ադամ եւ Եւա»): Այս հանելուկը եւս աստուածաշնչական հիմք ունի: Այլաբանօրէն է ներկայացուած սպիտակազգեստ Ադամի եւ Եւայի աստուածային այգին՝ դրախտ, իջնելը, ապա դրախտից վտարուելը եւ այծի մորթի կրելը:

№22. Միրգ, ծառոց: «Բող մի կայր՝ կաւատ շատոց, Որ ինք նման էր դժոխոց, Զօրն կենայր ինքն ի լըլկոց, զմիրգն հատոյց յամեն ծառոց» («Զմեռ»): Այս պատկերը բաւականին աշխարհիկ բնոյթ ունի, եւ բոզ ու կաւատ մակդիրներով բնորոշուող ձմեռը լլկող ու բռնացող է, որ վերացնում է բուսականութիւնը եւ ծառերի պտուղները:

№70. Ծառն, ծաղկեաց, կաղնի, ճիւղ: «Ծառն ծաղկեաց կաղնոյ նման, Ճեղք բաժնեցաւ երկոտասան, Զճիւղն եհան իւր հեծելհան, Զաշխարհս եբեր իւրն ի հասան»:

№18. Ծառոց, բուսեալ: «Նիւթն անշնչից ծառոց բուսեալ, Քան զկենդանի յերկիր սողեալ, Վայ աշխարհին, յոր նա մտեալ, Զի ի ծննդոց զնա ջնջեալ» («Գաւազան Մովսիսի»): Այս հանելուկի բնագիրը պայմանաւորուած է հինկտակարանեան պատմութեամբ, համաձայն որի՝ Մովսէս մարգարէն Իսրայէլի ժողովրդին Եգիպտոսից Աւետեաց երկիր առաջնորդելիս գաւազանով ուղղորդում ու հրաշքներ էր իրագործում երկար, տօթակէզ ու դժուարին ճանապարհին:

Ծառ ընդհանուր բուսանուն յատկանշող բառով է կազմուած բառարաններում չվկայուած ծառկտուկ բարդութիւնը, որը Ն. Շնորհալին գործածել է որպէս հանելուկի վերնագիր, եւ փայտփոր թռչնատեսակը գտնելու համար նշել է յուշող կամ բանալի ծառ ձեւաիմաստային միաւորը: խոյստ գեղեցիկ ունի փետուր Եւ աղուոր պաշտէ ամեն աւուր, Զծառն

ծակտէ հանց զերդ ըզդուր Ու կտուց ունի երկայն ու սուր» («Ծառկտուկ»): Պէտք է նշել, որ Ներսէս Շնորհալու հանելուկների լուծմունքները յաճախ խրթին են եւ պահանջում են բաւականին լուրջ մտասեւեռում եւ գիտելիք, սակայն այս հանելուկն աչքի է ընկնում յուշող բառերի ու բառակապակցութիւնների այլաբանական գործածութեամբ (ինչպէս՝ գեղեցիկ խայտ, փետուր, դուրի նման ծակտել, երկայն ու սուր կտուց):

Ծառ հասկացութեանն առնչակից է խումկ բառը, որով նշում է մի քանի տեսակ ծառերից կաթիլ-կաթիլ ծորացող «ռետնային անուշահոտ հիւթը»³⁹: №152 հանելուկում բզէզի յատկանիշները նկարագրւում են սնդիկի նման շարժուն, տաճիկ խնկիկի, այսինքն՝ արագ ծորացող խէժի շուրջը որպէս մանրավաճառ պտտուելով: Այսպէս՝ «Հաւատուորիկ մի կայր փոքրիկ եւ ինքն կեռայր զեղ ըզսնդիկ Յափիկն ունէր տաճիկ խնկիկ, Ի շուրջ կու գայր զեղ փերեզիկ» («Բզէզ»):

№48. Տունկ, բուսական (բոյս+ական): «Ինքն տունկ էր բուսական, Զօրացն եղեւ պատսպարան, Անշունչ կանգնեալ կայր պահապան եւ ի ծայրն ունէր կարմիր նշան» («Ռախաբ եւ կաւմիր չուանն»): Երիքովցի Ռախաբի տան ծղոտածածկ կտուրը բնագրում այլաբանուած է որպէս բուսական տունկ, որը դառնում է թաքստոց խորայնցի լրտեսների համար: Իր երեխաներին փրկելու գնով լրտեսներին ապաստարան տրամադրած Ռախաբը պարանով իջեցնում եւ ազատում է նրանց (Հեսու, Բ. 1–23, Եբրայեցիս, ԺԱ. 31): Պարանը խորհրդանշուած է որպէս կարմիր նշան, այսինքն՝ գաղտնի պայմանաւորուածութիւն:

բ) Պտղամուն կամ մրգամուն

№170. Տանն: «Շխուկ⁴⁰ մի կայր զետ ըզֆրեր, Ինք խաւ ի վեր մուշտակ ունէր, Խաղայր քաջօլ⁴¹, կենայր եւ յառնէր, Ու հետ տանձին զաչերն ածէր» («Արջ»):

№186. Ընկուզ // ընկոյզ: «Փոքրիկ շիշուկ չիպայ⁴² տեսայ, Հանցեղ ճարտար, որ հիացայ, Ընդ ծառն ի վեր գրիւ երթայ⁴³, Մոթ⁴⁴ մի ընկուզ իր չդիմանայ» («Ապուգնայ⁴⁵»):

³⁹ Տէս ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՅ, Հայերէն բացատրական բառարան, էջ 300:

⁴⁰ Շխուկ-շէլխ – մահմեդական կրօնաւոր:

⁴¹ Քաջօլ – իմաստը դեռեւս չբացատրուած բառ:

⁴² Շիշուկ չիպայ յ – երկամեայ որսաշուն:

⁴³ Գրիւ երթալ – վազելով բարձրանալ:

⁴⁴ Մոթ – մեծ եւ խոր փայտէ պնակ:

⁴⁵ Ապուզ, ապուզնայ (նաեւ обезьяна) – կապիկ:

№230. Ծիրան: «Յիստակ փոքրիկ ծիրան ծովիկ, Որսորդն ի մօտն նստեալ կծիկ, Զկներն ի ներս զինչ զմարդիկ, երբ տեսանէ զինքն կզիկ» («Հայելի»): Փ. Այնթափեանը գրում է, որ «Վարպետութեամբ եւ լեզուի կոկիկ ներդաշնակութեամբ է յօրինուած «ծիրանի ծովիկ»-ը, որի ափին նստել է ձկնորսը»⁴⁶:

Բզէզին նուիրուած №153 հանելուկում հանդիպում է ծիրան արմատով կազմուած է ծիրանազգեստիւ (ծիրան+ի+ա+զգեստ+իւ+ք) բարդութիւնը: «Ի վեցից վերացելով եւ ի չորից թուցելով, Գայր ընդ ամպս երկնից շառաչելով Ծիրանազգեստիւք պճնել»:

Նկատում ենք, որ նշուած հանելուկներում առկայ է պտղի այլաբանական վարպետ նկարագրութիւն, որն իր հիմքում դիմառնութիւն ունի: Ինչպէս նշում է Ա. Ղազինեանը, «Բարառնութեան առարկաները կարող են լինել ինչպէս կենդանիները, այնպէս էլ բոյսերն ու բնութեան տարբեր երեւոյթները: Այս դէպքում բարառնութիւնը նոյնանում է այլաբանութեան հետ»⁴⁷:

զ) Բանջարեղէն կամ խոտաբոյս, մաւե ծաղկամուն կամ սրանց առնչակից հասկացութիւն են նշում՝

№10. Բամբակ: «Տէս թէ յուսկից ինք ժողովի, Զեդ բամբակ, բուրդ՝ հայնց կու դիզուի, եւ ինք կու գոռայ պէս առիւծի, եւ ի ժանեցն իւր հուր կու թափի» («Ամպ»):

№233. Դդում, դդմէ, բանջար ոսպ: «Հաւասար քարձեր⁴⁸ են գերդ ըզբուզ, Մէկ մի չկայ յիրենք գուռ, Մէկ-մէկ ի շուտ գան գուռ ի գուռ⁴⁹ եւ ունին հազար դենկի⁵⁰ խնդուզ⁵¹, Պընակ ունին դդմէ պըլուզ, եւ ի ներս՝ բանջար ոսպն ու ընկուզ» («Ըռուս» // «Ըռուզ»): Բանջար ոսպ բառակապակցութեան մէջ բանջար գոյականն ստացել է «դալար, կանաչ» ածականական իմաստ:

№131. Ոսպ, ճուլպան⁵²: «Յիսնէ այլ ի՞նչ ուզես դու բան, Յիւր վիզըն կայ սպիտակ նշան, Երամ-երամ իրենք երթան եւ աղէկ սիրեն ոսպն ու ճուլպան» («Հոբալ»⁵³): Այս հանելուկի առաջին տողը Ա. Մնացականեա-

⁴⁶ Փ. Ա. Յ. Թ. Ա. Փ. Ե. Ա. Ն., նշ. աշխ., էջ 63:

⁴⁷ Ա. Ղ. Ա. Զ. Ե. Ա. Ն., նշ. աշխ., էջ 177–178:

⁴⁸ Քարձ – ցանցառամօրուս:

⁴⁹ Գուռ ի գուռ – կուզէկուզ:

⁵⁰ Դենկ – երկու կողմերով հաւասարակշռուած մորթիների կոյտ, բեռ:

⁵¹ Խնդուզ – սամոյր, կուղբ, ջրշուն:

⁵² Ծուլպան (պարսկերէն-արաբերէն) – բուսատեսակի անուն:

⁵³ Հոբալ – վայրի աղանու տեսակ:

նը համարում է յարմարեցրած եւ հանելուկի բուն իմաստին չհամապատասխանող⁵⁴։ Տուեալ դէպքում բան եւ նշան ձեւաիմաստային միաւորները յանգաբառեր են։

№208. Ծաղիկ։ «Դու խիստ ծանօթ ես այն ծաղկին, Զամեն կենայ ի մէջ ջրին, Դեկան մի պահ ունի յափին եւ ի հոգւոցն է դարձել դեղին» («Նաւ»)։

Ծաղիկ գոյականի յոգնակի թուի սեռական հոլովի ծաղկանց քերականական ձեւը մէկ անգամ կիրառուած է №145 հանելուկում։ Այսպէս՝ «Քարգործ մի կայր խիստ իմաստուն, Հրաշից ծաղկանց շինեց իր տուն, Քաղցր խօսի նորա լեզուն, Բնաւ չընկնի յիր աչքն քուն» («Մեղու»)։

Ունի յոգնակերտով ծաղկումն ձեւին ենք հանդիպում մի հանելուկում, որը Ա. Մնացականեանը համարում է Աստծոյ գաղափարին նուիրուած եզակի ժողովրդական տարբերակ⁵⁵։ Այսպէս՝ «էնիկ ի՛նչ է. Մոկիկ⁵⁶ ասմունք, Տասնուխինգ ծաղկունք»։

Յոգնակի գործիականին հանդիպում ենք ԺԲ. շարքից №1 հանելուկում։ «Դաշտ մի կայր՝ արձակ ու լայն, Լցեալ ծաղկօք յոյժ զանազան, Ոչ յեղանակս միայն գարնան, Այլ անթառամ միշտ յաւիտեան» («Երկինգ») ⁵⁷։ Հանելուկների բնագրերը կազմուած են լուծմունքը հաստատող համեմատելի բառերի հիման վրայ։

№136. Մանուշակ։ «Է՛ ծիրանի ու բարկ սպիտակ, Գոհար գոռւզ եւ աղուոր տեսակ Ու կու լինի մարդոյ ճաշակ, Բայց հոտ չունի զեղ մանուշակ» («Բօք»)։ Բացատրական բառարաններում չվկայուած, թռչունների նուիրուած հանելուկների շարքում ներկայացուած բօքի մասին այս հատուածում ժխտող յատկանիշի սկզբունքով ընտրուած մանուշակ ծաղկանունն ունի բանաստեղծական տողը յանգաւորելու նպատակ։ Նոյն քառատողի ծիրանի ածականը կազմուած է ծիրան պտղանունով, որը հանդիպում է նաեւ №205՝ «Պատինջան» հանելուկում։

№216. Յըմախտակ⁵⁸։ «Իրք մի՛ գլուխ ունի ու գտակ եւ երկուքն կան ի մէկ փեթաք, Թէ ու հասնի՝ ինքն է խիստ խակ, Դառն ու լեզի զերդ ցըմախտակ» («Մատնկ») ⁵⁹։

⁵⁴ Տէս Ա. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, Մատենագիրք հայոց, ԻԱ., էջ1222–1223։ Ի դէպ, 1223 էջում առկայ է Յիս վիզն բառակապակցութիւնը, 1284 էջում զետեղուած նոյն հանելուկում՝ Յիս վիզն։

⁵⁵ Տէս Ա. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, Մատենագիրք, ԻԱ., էջ 1231։

⁵⁶ Մոկիկ բառը բառարաններում վկայուած չէ։

⁵⁷ Այս հանելուկը եւս ունի փոփոխակներ։

⁵⁸ Մեխակազգիների ընտանիքին պատկանող բուսատեսակ՝ ցմախ, նաեւ այդ բոյսի արմատը։

⁵⁹ Մատնկ – մատանի։

№155, 155ա. Կոտման հունդ: «Պարունակեալ հողոյ ծընունդ, Հայնց շատ եւ առակ զերդ կոտման հունդ, Ի վանք վախեն հաբեղազունդ եւ էառ ամեն խաղախս⁶⁰ թունդ» («Լու»): Հանելուկում գործառուած է նմանութեան ոճական միջոցը, եւ զուգահեռ է անցկացուած լուերի գոյնի, մանրութեան եւ կոտեմի սերմերի տեսքի միջեւ:

№30. Դաշտն // կալ: «Մունիդ⁶¹ կանչող եւ ձայնն ի խոր, Դաշտն ընդարձակ եւ խնդմնդոր, Ամբոխն անհուն խուլ ու խոլոր, Արդիւնքն շատ եւ զօրաւոր»: Հանդիպում ենք նաեւ Ներսէս Շնորհալու «Գիր» հանելուկում, որում ներկայացւում է թղթի եւ գրի միասնութիւնը: «Մօրն արգանդն սեւային, Հայրն սոյնպէս ամենեւին, Որդիքն սեւ ծնանէին եւ ի սպիտակ դաշտ արածէին» («Գիր»): Նաեւ՝ «Սպիտակ կալ, Սեւ իծան մէջ կարածան»:

№150. Արտ // կալ, «Թագւոր չունին, Ժողովին առակ, Իջնուն ահեղ անթիւ բանակ, եղուկ՝ ում գան անվարձ մշակ, Հնձեն զամեն արտերն հատակ» («Մարախ»):

№97, №82. Սերմնացան, №156. Անսերմնական: «Ծնունդ՝ անծին եւ անսերմնական, Ծնունդ, որ չէ՛ ծնողին նման, Նեղիչ անծին տանս Ադամեան, եւ ի ծնողէ առնու վախճան» («Ոջիլ»):

№157. Կընգուղ⁶²: Այս դէպքում կիրառուած է փոխանունութիւն՝ ըստ նմանութեան ոճական հնարքը: «Կայր միակեց մի ասորի, Ունէր կընգուղ չաք ըռմբի, Ամ ինչ կարդամ զիրմէն բընի, Առիւծն ու փիղն իւր է գերի» («Միեղջերու⁶³»):

№21. Խոտ: «Մանուկ մի կայր զօրեղ, հրեղէն, Խմեց, հատոյց զչուրն ի գետէն, Զիւն եւ իշուն արար նա քէն, Հնձեց, վերուց զխոտն ի դաշտէն» («Մաֆի»): №166. Խոտեր: «Ի յԱստուածբանն է նմաներ, Հերն վայելուլ եւ գոռու եկեր, Է ինք բարի եւ աղուոր ընկեր, Բայց զօձն ուտէ զինչ զխոտեր» («Մաֆի»): Տուեալ դէպքում խոտեր յոգնակի ձեւն ընտրուած է յանգաւորման նպատակով (նմաներ // խոտեր):

№176. Բանջար: «Զետ զգաղար խիստ է ի յար, Սիրէ զմորթի եւ ուտէ զբանջար, Ամ ինչ կարդամ զիրմէ քեզ ճառ, Խելօքըն ծով է ու Խիկար»

⁶⁰ Խաղախ – նաւակ:

⁶¹ Մուն – մօղուկներից մանր խայթող միջատ:

⁶² «Բամբակի բոյսի դեռ չբացուած վեղարածեւ պտուղը»: Տէս Ս. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, Հայերէն բացատրական բառարան, էջ 449:

⁶³ Միեղջերու – ընդհանրապէս մի եղջիր ունեցող կենդանի, միաեղջիր:

(«Աղուէս»)⁶⁴: Այս օրինակում յանգաւորուած են բանջար բուսանուներ եւ խիկար յատկանունը:

Անդրադառնալով այս շարքի սերմ եւ դաշտ բուսանուանն ածանցեալ կամ յարակից բառերին՝ նշենք, որ Հ. Որսկանեանը Ներսէս Շնորհալու՝ գրին եւ գրքին նուիրուած №97 հանելուկի «Սերմն սեւ ու ջրահոլով, Դաշտն զուգած սպիտակ բամբկով, Հինգ եզն՝ ի լուծն յարօրով, Իւրեանց վաստակն՝ ընթանալով» տողերում գործածուած բամբակ բուսանուան եւ բոյս ընդհանուր հասկացութեանն առնչակից սերմ, դաշտ բառերի այլաբանական բովանդակութեան մասին գրում է, որ գրի սերմն է սերմանում գրքի բամբակեայ սպիտակ էջերին: Ապա ըստ այսմ կարծիք է յայտնում, որ «Արօրին լծուած հինգ եզներով դաշտը, այսինքն՝ ձեռագրի էջը հերկելը վերաբերում է ձեռագրի գրչին՝ ձեռքի հինգ մատներով գրիչը պահելով գրելուն, ինչպէս որ մշակն է եզներով հերկում դաշտը»⁶⁵:

ԺԲ. շարքի №55 հանելուկի առաջին տողում գործածուած է բոյսին գոյակից հող բառը, որով յատկանշում է Խնոցի լուծմունքի առաջացման ելակէտը: Այսպէս՝ «Ծնաւ ինքըն ի հողէն, Մարմին էառ ի ինքն ի հրէն, Հանին ի կառսն փայտեղէն, Եւ խոցեցին յաջոյ կողէն» («Խնոցի»): Կարելի է կարծել, որ խորամիտ հեղինակը նկատի է ունեցել ոչ միայն հողից կեանք ստացած այն ծառատեսակը, որից սարքուած է խնոցին, այլեւ անհրաժեշտ կաթնամթերքը, որի գոյութիւնը եւս պայմանաւորուած է հողով: Սոյն հանելուկն ունի №55ա եւ ԺԱ. շարքի №222 տարբերակները. առաջինը՝ «Ջրծում» բարբառային վերնագրով, երկրորդը՝ «Խնոցի» գրական ձեւով: Երկրորդ տարբերակում հող բառը բացակայում է:

ԲՈՒՍԱՆՈՒՆ-ԼՈՒԾՄՈՒՆՔԸ ԲՈՒՍԱՆՈՒՆՈՎ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒՈՎ ԽՈՒՄԲ

Այս խմբի մէջ են դասուում այն հանելուկները, որոնք համատեղում են վերը նշուած երկու յատկանիշները, այսինքն՝ իբրեւ վերնագիր ընտրուած է մի բուսանուն, որը մեկնաբանում, ներկայացւում է այլ բուսանուան կամ իմաստակից, առնչակից բառերի միջոցով:

⁶⁴ Զաղար – որսի շուն, բարակ:

⁶⁵ Հ. ՈՐՍԿԱՆԵԱՆ, Գրին ու գրչութեան արուեստին նուիրուած հայ միջնադարեան հանելուկները, «Բազմավէպ», ՃԶ. տարի, 2022, թիւ 1–2, էջ 235:

ա) Ծառեր եւ թփեր են նշում՝

№212. «Փիճի» («կոնաբերների կարգին պատկանող ծառ»): «Ծառ մի կայ լեռանաբնակ, Զերդ մոմեղէն է ինք շիտակ, Յիւրմէն ելնէ տաշտ ու պնակ, Թի ու սեղան ու պարզունակ»:

№214. «Կաղնի»։ «Փայտ մի կայ՝ խիստ կու ճայթէ եւ ի պտուղն զերդ զարջ է, եւ այլ զերդ խնձոր հանց բոլոր է, Բայց զխոզն ու զարջն կու բտէ»:

№218. «Կոապալայ»։ Միջին հայերէնի բառարանում այս ծառանունը վկայուած չէ։ Ստ. Մալխասեանցի բառարանում տրուած է կոապոլայ հնչիւնական տարբերակով։ «Ծառ մի կայ, ուր կայ հով ջուր, Պտուղն է իւր կարմիր՝ զերդ հուր, Արի, գնա կեր, Է՛ր կաս ի լուր, Թո՛ղ է լեղի, կեր քան զապուր»:

№219. «Ճըփմ»։ Միջին հայերէնի բառարանում վկայուած են ճըփմ // ճըփնի // ճփի // ճփնի, «շնամեռուկազգիների ընտանիքին պատկանող մշտադալար թուփ, դափնեվարդ (nerium oleander)»:

բ) Պտղաւանդ են՝

№50 (ԺԲ. շարքից). «Ընկոյզ»։ «Լսէ՛, եղբայր, քաջ կարեւոր, Առ քեզ նշան, ինքն է բոլոր, Նա իւղ ունի, կեղեւն՝ ոսկոր, Կտուեա՛ եւ կեր զգուռզն աղուոր»։ №202. «Մայրն ի փայտէն հաստատուն, Դուստրն համեղ՝ զինչ զճրագուն, Կեղեւն թուխ է եւ սիրուն, Ինքն է հալօղ պիղծ կերակրոյն»։ Տուեալ դէպքում յուշող բանալի բառն է գուրգ-ը, որով նշում է ընկոյզ պտղի կլորութիւնը եւ գուրգի նման ամուր լինելը։

№195. «Խնձոր»։ «Պտուղ մի կայ յոյժ ցանկալի, եւ ինք գեղեցիկ տեսակ ունի, Յոյժ վայելուչ եւ պիտանի, Որ հիւանդաց շարապ լինի»։ // №196. «Խնձոր»։ «Զերդ գնարինջ է հանց բոլոր եւ երկու երեսն իւրեանն աղուոր, Իբրեւ զվարդի հոտն է յորդոր, Յեղքն կոչեն զինք թագաւոր»:

№198. «Սերկեխիլ»։ «Յոսկի խնձոր նման լինի, Իւր հոտն գայ անպակ մշկի, Ինքն է հագեր գեղին թաղի եւ գայ յառջեւ թագաւորի»։ Այստեղ տեքստում ոսկի խնձոր բառակապակցութիւնը յուշում է գտնելու մշկի // մուշկի // մշկեմու⁶⁶ հոտ ունեցող պտղի անունը։

№199. «Թուզ»։ «Ի մրգերոյ ի զատ չասեմ եւ ոչ զրաջան շաղակրատեմ, Զինքն ընդ երկու դէմ պատառեմ, Մոթ մի կորեկ ի վայր թափեմ»:

⁶⁶ Մշկի, տես մուշկ-երնջակի ձեւով եւ ընկոյզի մեծութեամբ բոյս, շուրջը մանիշակագոյն (Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, էջ 364):

№200. «Կեռաս»: «Ուր գտանես, եղբայր, դու կեր, Մուռանն չէ, զայն մի՛ յիշէր Առողջ է. մի՛ յիրմէ վախէր, Աղուոր ունի կարմիր ճռեր»: Տուեալ դէպքում հեղինակը դիմել է ժխտող բառի օգնութեանը՝ մոտաւ պտղանուանը, որ է՝ «կեռասանման, սեւ գոյնով թունաւոր պտուղ, շնխաղող»⁶⁷:

№201. «Կաղիւն»: «Տուփ մի կայ, որ զերդ ծառ է, եւ իր պըտուղըն ոսկր է, Մէջըն կարի խիստ պարարտ է, եւ արջըն կարի զինքըն սիրէ»:

№203. «Վիսօն»: «Իրք մի տեսակ զերդ պատընջան, Քրքումն ի նա յաւանըման, Բնութիւն ունի ինքն եռական, Յերիցն մինն է պատուական»:
Տուեալ դէպքում հետաքրքրական է դառնում լիմօնի եւ սմբուկի համեմատութիւնը: Կարելի է կարծել, որ Կիլիկիայի հայոց թագաւորութեան տարածքում միջնադարում մշակուել է լիմօնի գոյն ունեցող սմբուկ կամ սմբուկանման լիմօն: Այս վարկածը հաստատում է բաղրիջանին նուիրուած հանելուկի տարբերակներով: №205. «Պատիւնջան» (1 անգամ) // «Բաղրիջան»: «Հասակաւ բռան ունի, Գոյնն է զգեստ թագաւորի, Պսակ փշոց ի գլուխն ունի, եւ քացախաւ ինքն բուծանի»: Այս հանելուկն ունի ժողովրդական տարբերակներ: «Ինքը բռնցքի ղաղամ»⁶⁸, Շորեր ունի թագաւորի պէս. Փշէ թագ ունի գլխին, Ծիրանի շորեր ունի հագին» («Բաղրիջան»):

գ) Ծաղկամուսներ՝

№207 «Վարդ»: «Կարմիր ու սպիտակ մշկամներ»⁶⁹, Խուռնաբողբոջ գօհար նագեր, Մէջն է ի լի ոսկի գնդեր, Զարքայութեան հոտն ինձ բեր»:
Այս հանելուկի խումբ+ա+բողբոջ կազմութեան երկրորդ՝ բողբոջ արմատը բուսանուն նշող բառաշերտի մաս է կազմում:

Վարդ ծաղկանուան գործածութեան մասին Փ. Այնթափեանը գրում է. «Բանաստեղծական մի գողտրիկ յօրինուածքում մեծ վարպետութեամբ Ն. Շնորհալին նկարագրել է «վարդ ու գինի» երեսով մի գեղեցիկ աղջիկ»⁷⁰ («Գոհար նագու մեծ հօր որդի, Կոյս մի երեսն վարդ ու գինի»): Հոգեւորականի կողմից ռոմանտիկական քնարերգութեանը յատուկ նման պատկեր կերտելը գնահատում էր որպէս ազատամտութեան դրսեւորում:

№209. «Նոնէս»: «Ամ ինչ ասէք դուք այս ծաղկիս, Որ բողբոջեաց ի մէջ դաշտիս, Գարնան բերէ մեզ աւետիս, Իւրէնն ասեն Մահմետայ թիս»:
Այս հանելուկում որպէս վերնագիր է գործածուած նարգիզ ծաղկա-

⁶⁷ Ռ. ՂԱԶԱՐԵԱՆ, Հ. ԱՌԵՏԻՍԵԱՆ, Միջին հայերէնի բառարան, Երեւան, 2009, էջ 534:

⁶⁸ Ղաղամ – չափ:

⁶⁹ Մշկամ – մուշկ, մշկենի:

⁷⁰ Փ. ԱՅՆԹԱՓԵԱՆ, նշ. աշխ., էջ 63:

բոյսի նոճէս բարբառային տարբերակը: Առաջադրուած հարցի պատասխանը գտնելու համար բնագրում կիրառուած են բոյսերին առանձնայատուկ բողբոջել բայը եւ բողբոջելու վայրը՝ դաշտ համապատասխան տարածք նշող գոյականը: Տուեալ բնագրում ուշագրաւ է բանաստեղծական տողը յանգաւորելու նպատակով աւետիս բառի թելադրանքով ընտրուած Մահմետայ թիս իսլամաբանութիւնը, որը տեղ է գտել միայն «Միջին հայերէնի բառարանում»՝ «շքանարգիզագգինների ընտանիքին պատկանող բոյս, նարգես (narcissus)» բացատրութեամբ⁷¹:

№210. «Նոճէս»: «Իր տեսն է զերդ ըզքաֆուր, Եւ իր հոտն է զերդ ըզմթուր, Ձգարունն եբեր եւ եղաւ մեզ դուր Եւ ինքն ի յամեն մշլիս է յոյր»: Այս հանելուկում նոճէս («նարգիզ») բարբառային ծաղկանունը բացայայտելուն օգնում են մնթուր բոյսի յատկանիշները (նաեւ՝ մնփուր «պարսկերէն՝ mantur, խաչածաղկաւորների ընտանիքին պատկանող բոյս, երեկորնիկ, մանուշակ, Hesperis mftroglis»):

դ) Բանջարեղէն կամ ընդհանուր խոտաբոյս են նշում՝

№204. «Խիար»: «Փոյթ արձակէ զնա ի կապէ, Գարին ի փորըն կու աճէ, Դանակ առ, զմորթըն շրջէ, Թէ չէ ելաւ միսն ի բանէ»:

№217. «Յարդ»: «Ծառ մի աղւոր կարի գոհար, Կարմիր երես որպէս նշխար, Զինքն շինեն աղւոր տաճար, Իւրմէ ելնէ ձայնեղ ժամհար»: Ամառուան վերաբերող մէկ այլ հանելուկում գործածուած է յարդ բառի դարման հոմանիշը: Այսպէս՝ №20. «Մէկ մի կու գայ եւ ինք խիստ գազան, Հայնց զեղ զհուր կայ ի վառման, Հնձեաց վերուց զինչ կայ դարման, Եւ ամեն պտուղք յիրմէ հասան» («Ամառ»):

Օրինակները ցոյց են տալիս, որ այլաբանօրէն գործածուած բուսանունների կիրառութիւնը պատճառաբանում է երեք հիմքով՝ ա) ըստ արտաքին նմանութեան, բ) ըստ հանելուկային եւ այլաբանական առարկաների գործառական նմանողութեան եւ գ) այլաբանական յատկանիշների հակաբնական զուգորդմամբ, որի մասին Ս. Յարութիւնեանը գրում է. «Հանելուկի պատկեր-բանաձեւը լուծման առարկայի որոշ յատկանիշների այլաբանական-փոխաբերական, երբեմն էլ ուղղակի-անմիջական պատկերաւոր վերարտադրութիւնն է, ձեւաւորում է առարկայական իրականութեան այնպիսի գծերից ու երեւոյթներից, որոնց ընդհանուր կերպարը յաճախ հեռու է հանելուկի լուծման առարկայի իրա-

⁷¹ Բ. ՂԱԶԱՐԵԱՆ, Հ. ԱԻՏԻՍԵԱՆ, Միջին հայերէնի բառարան, Երեւան, 2009, էջ 487:

կան պատկերը լինելուց, այլ միայն հեռուից հեռու ակնարկում է տուեալ առարկայի ինչ-որ յատկանիշներ»⁷²:

Բուսանունների յաճախականութեան պատկերը դիտարկելիս նկատում ենք հետեւեալը.

Ամենաբարձր յաճախականութիւն ունի ծառ ընդհանուր հասկացութիւն արտայայտող արմատը՝ ծառոց քերականական ձեւով եւ ծառուկ, ծառկառուկ կազմութիւններով:

Երկրորդ կարգում է ընդհանուր բար նշող պտուղ արմատը (տասներկու անգամ), որին յաջորդում են այգի (եօթ անգամ), ծաղիկ՝ ծաղկանց, ծաղկեաց, ծաղկեցաւ, ծաղկօք, ծաղկի (եօթ անգամ), ճիւղ // ճէղ // ճուռ (եօթ անգամ), սերմ՝ սերման, սերմնացան, անսերմնական (վեց անգամ), դաշտ (վեց անգամ) // հերկ (չորս անգամ), ծիրան՝ ծիրանի, ծիրանազգեստիք (չորս անգամ), բանջար (չորս անգամ), խնձոր (չորս անգամ), ընկոյզ (չորս անգամ), խունկ՝ խնկիկ, խնկաբեր (չորս անգամ), հունձ՝ հնձել, հնձեաց // հնձեց (չորս անգամ), տունկ (չորս անգամ):

Եռակի են գործածուած՝ բոյս՝ բուսեալ, բուսական, միրգ՝ մրգերոց, մրգալի, վարդ, ցորեն, խոտ, փայտ՝ փայտեղէն:

Կրկնակի են գործածուած՝ տանձ, կաղնի, նոճէս, խաղող, պատընջան, դդում, գարի, ոսպ, մշկամ // մշկի, բամբակ, մամանայ // մամնայ, կեղեւ, բողբոջ՝ բողբոջեաց, խոտնաբողբոջ, հաց՝ անհաց, հող՝ հողոյ:

Եզակի են հանդիպում՝ բուրաստան, մթուր, մրտենի, փիճի, սոճի, ճրփըն, կոապալայ, նարինջ, նուտ, թուզ, սերկեփլ, քրփում // զափրան, մանուշակ, ճուլպան, գդթոր, լիմօն, կեռաս, մուտան, կաղին, սեխ, սոխ, սխտոր, կորեկ, սէգ, աւել, կնգուղ, սունկ, յարդ // դրման, խիար, հունդ, արտ, արօտ, փուշ, գերան, կոտման հունդ, մահմետայ թիս, կանաչ հագնել («տերեւակալել, ծաղկել»):

Ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ Ն. Շնորհալու հանելուկների նախնական հիմնական նիւթը՝ Հին եւ Նոր կտակարանները, աստիճանաբար ընդլայնուելով, ներառում է աշխարհիկ թեմաներ՝ բնութիւն, երկնքի եւ երկրի ներկայացուցիչներ, առտնին կեանք եւ այլն: Ինչպէս Ա. Մնացականեանն է ասում, «Կրօնական թեմաներն ազատօրէն մշակուում եւ տարածուում էին դպրութեան բոլոր հնարաւոր միջոցներով, մինչդեռ աշխարհիկ թեմաները նոր էին միայն իրաւունք նուաճում գրականու-

⁷² Ս. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ, նշ. աշխ., էջ է:

թեան մէջ մուտք գործելու»⁷³: Աշխարհիկ բնոյթի հանելուկների միջոցով անմիջական կապ էր ստեղծուում գեղարուեստական խօսքի, մարդու եւ բնութեան միջեւ:

Ինչպէս նկատուում ենք, երեք խմբերում ընդհանուր առումով բոյս նշող բառերից գերակայ թուով գործածութիւն ունեն ընդհանուր բուսանունն յատկանշող ծառ եւ այս արմատով կազմուած բառեր (տասնհինգ անգամ), պտուղ (տասներկու անգամ), ծաղիկ (հինգ անգամ) > ծաղկանց (մէկ անգամ), ծաղկօք (մէկ անգամ) եւ առնչակից բառապաշարի մաս կազմող այգի (եօթ անգամ), դաշտ (վեց անգամ) բառերը: Միւս բուսանունները հիմնականում եզակի գործածութիւն ունեն:

Ներսէս Շնորհալին բուսաբառերը յաճախ գործածում է ոճական տարբեր նկատառումներով՝ մակդիր, համեմատութիւն, անձնաւորում, փոխաբերութիւն, չափազանցութիւն, բանաստեղծական տողի յանգաւորում եւ այլն:

Հանելուկներում արծարծուած է հարուստ բարբառային նիւթ, նաեւ բառարաններից դուրս մնացած բազմաթիւ բուսաբառեր, որոնք առանձին քննութեան առարկայ կարող են հանդիսանալ:

Ակնառու են նաեւ այս յատկանիշները.

ա) Հանելուկներում մեծ մասամբ հանդիպում են հանրութեանը լայնօրէն յայտնի բուսանուններ, բացառութեամբ մի երկուսի:

բ) Մի շարք բուսանուններ գործածուած են բանաստեղծական տողը յանգաւորելու նպատակով:

գ) Կան գրական եւ բարբառային բուսանուններ, ինչպէս նաեւ միջին հայերէնին բնորոշ արաբապարսկական փոխառութիւններ:

դ) Բաղադրեալ կազմութիւն ունեցող բուսանուններ հանելուկներում հազուադէպ ենք տեսնում:

ե) Հանելուկների մեծ մասն ունի փոփոխականեր, որոնցում երբեմն բուսանունների բառապաշարի մաս կազմող բառերի համապատասխան լեզուական միաւորները չեն կրկնուում:

զ) Կենդանական աշխարհ նշող բառերի քանակը գերազանցում է բուսական աշխարհ նշողներին, որոնք մօտաւոր թուով քսանհինգն են:

Բուսանունների բառընտրութեան սոյն պատկերը կարելի է բացատրել.

⁷³ Ա. ՄԱՅԱԿԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 86:

1) Հեղինակի պատկերաւոր մտածողութեամբ, հանելուկների բանալի բառերի իմաստները տարբեր բուսանունների միջոցով մեկնաբանելու հմտութեամբ:

2) Բուսանունների սահմանափակ քանակը պայմանաւորուծ է Հռոմկլայ վանքի տարածքի շոր, կիսաանապատային կլիմայով, բուսականութեան սակաւութեամբ:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ներսէս Շնորհալի, հայրապետ, միջին հայերէն, հանելուկ, բուսանուն, լուծմունք, յուշող բառ, այլաբանութիւն, համեմատութիւն:

РЕЗЮМЕ

Нерсес Шнорали — основоположник жанра авторских загадок-головоломок.

Загадки с названием растений можно разделить на три основных группы:

1) название растения, оно предлагается как вариант ответа, то есть заглавие, 2) название растения, используемое в стихотворных строках загадки и подсказывающее разгадку, 3) группа загадок, с заглавием имен растений, которые отгадываются названием другого растения.

В трех группах чаще всего встречаются слова дерево, плод, цветок, сад, поле. Другие названия растений в основном применяются в единичных случаях.

Имена растений часто употреблены с разными стилистическими соображениями: наречие, сравнение, олицетворение, метафора, преувеличение, рифма стихотворной строки и т. д.

С помощью загадок представлены богатый диалектный материал, а также много таких наименований растений, которые не входили в состав словарей и могут стать предметом исследований.

Загадки, за малым исключением, содержат в основном широко известные наименования растений.

Ряд наименований растений используются для рифмы стихотворной строки.

Имеются литературные и диалектные названия растений, а также арабо-персидские заимствования, характерные для среднеармянского языка.

Составные названия растений в загадках встречаются редко.

Большинство загадок имеют варианты, в которых иногда имя одного и того же растения не повторяется.

Количество слов, обозначающих животный мир, превышает количество слов, обозначающих флору.

SUMMARY

Nerses the Graceful is the founder of the genre of authorial riddles and puzzles.

Riddles with plant names can be divided into three main groups: 1) the name of the plant, which is offered as a solution option, i.e. the title, 2) the name of the plant, which is used in the verse lines of the riddle and helps guessing, 3) a group of riddles, the title of which is the name of the plant, which is guessed by the name of another plant.

In the three groups, the words tree, fruit, flower, garden, field occur most often. Other plant names are mostly used in isolated cases.

Plant names are often used with different stylistic considerations: adverb, comparison, personification, metaphor, exaggeration, rhyme of a poem line, etc.

With the help of riddles, rich dialect material is added, as well as many names of plants that were not included in dictionaries and can become the subject of research.

A number of plant names are used to rhyme a verse line.

There are literary and dialectal names of plants, as well as Arabic-Persian borrowings characteristic of the Middle Armenian language.

Compound names of plants in riddles are rare.

Most riddles have variants, in which the name of the same plant is not repeated.

The riddles contain mostly well-known plant names, with a few exceptions.

The number of words denoting the animal world exceeds the number of words denoting flora.

